

Թեմա 1: ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ողջույն, այսօր մեկնարկում ենք ֆինանսական կրթությանը վերաբերող դասընթացների շարքը: Այս և առաջիկա տեսադասերի ընթացքում միասին ուսումնասիրելու ենք 9 տարբեր թեմաներ, որոնք կզինեն մեզ հիմնարար գիտելիքներով և կօգնեն վստահ կողմնորոշվել ֆինանսների աշխարհում:

Եվ այսպես, ծանոթանանք թեմաներին՝

Առաջինը ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ-ն է՝ հենց այս տեսադասի շարունակությունը, որի ընթացքում կհասկանանք, թե ինչ է ֆինանսական կրթությունը և ինչու է այն մեզ համար կարևոր: Ապա կհետևեն Հայաստանի Հանրապետության ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ-ի, ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ, ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ, ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ԵՎ ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԻ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ, ՍԵՓԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ, և, վերջապես, ԽԱՐԴԱԽՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ մասին տեսադասերը:

Եվ այսպես, սկսենք: Նախ հասկանանք, թե ինչու է կարևոր ֆինանսական կրթությունը թե՛ անձնական ֆինանսների կառավարման, և թե՛ ձեռնարկատիրական գործունեության ծավալման տեսանկյունից: Սա գիտելիքի այն շրջանակն է, որը թույլ է տալիս մեզ.

- **Նախ հզորանալ.** այսինքն՝ կայացնել տեղեկացված ֆինանսական որոշումներ՝ սկսած բյուջետավորումից և խնայողություններից մինչև ներդրումների իրականացում և ապագայի պլանավորում:
- **Խելացի որոշումներ կայացնել.** այդ թվում՝ հասկանալ, թե ինչպես են կառավարում պարտքը և խուսափում ֆինանսական ծուղակներից:
- **Երկարաժամկետ պլանավորել.** ֆինանսական կրթությունը խրախուսում է երկարաժամկետ ֆինանսական պլանավորումը՝ ապահովելով ապագա կայունությունն ու անվտանգությունը:
- **Կառավարել ռիսկերը.** ֆինանսական կրթությունը սովորեցնում է ռիսկերի կառավարում, ինչը կենսական նշանակություն ունի ներդրումային որոշումներ կայացնելիս և սեփական ակտիվները կառավարելիս:
- **Ձեռնարկատիրական գործունեություն ծավալել.** Ֆինանսական կրթությունը խթանում է ձեռնարկատիրական հմտությունները և օգնում է բիզնեսն արդյունավետ կառավարելու գործում:

- Եվ, իհարկե, ֆինանսական կրթությունը օգնում է խուսափել խարդախություններից. այն տրամադրում է գիտելիքներ՝ ճանաչելու և խուսափելու ֆինանսական խարդախություններից և զեղծարարություններից:

Եվ այսպես, ֆինանսական կրթությունը փողի կառավարման վերաբերյալ տեղեկացված և արդյունավետ որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ձեռքբերման, մոտեցումների ձևավորման գործընթացն է:

Ֆինանսական կրթության նպատակն է, որ Հայաստանի Հանրապետությունում բնակվող մարդիկ.

- Կարողանան հասկանալ հիմնական ֆինանսական և մակրոտնտեսական հասկացությունները և արդյունավետ կիրառեն դրանք իրենց անձնական ֆինանսները կառավարելիս,
- Արդյունավետ կառավարեն անձնական և ընտանեկան բյուջեն,
- Կատարեն խնայողություններ և պլանավորեն ապագայի համար,
- Արդյունավետ կառավարեն վարկերը և պարտքերը,
- Կատարեն ֆինանսական ծառայությունների պատասխանատու «գնումներ»,
- Վստահորեն պաշտպանեն սեփական իրավունքները ֆինանսական ծառայություններից օգտվելիս,
- Արդյունավետ կիրառեն թվային ֆինանսական ծառայությունները,
- Եվ անվտանգ օգտվեն ֆինանսական գործիքներից, այդ թվում՝ խուսափեն ֆինանսական զեղծարարություններից և խարդախություններից: